ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության՝ ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարների մասնակցությամբ

09.09.2024թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին

Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Կ.Աշրաֆյանը- մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Գ.Քարհանյանը, Մ.Խեչումյանը, Ռ.Մարգարյանը, Ա.Հակոբյանը, Ա.Բաղդասարյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Շահվերդյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարների կողմից Մարզխորհրդի նիստի թիվ 2 արձանագրությամբ և ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցությունների ընթացքում տրված հանձնարարականների և արված առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն:

(զեկ. ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարներ)

2. Ս/թ մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների պատճառով տեղի ունեցած աղետի հետևանքների վերացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և անելիքների, ինչպես նաև փոխհատուցումների վճարման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն:

(զեկ. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյան)

3. ՀՀ Լոռու մարզում սուբվենցիոն ծրագրերով, ինչպես նաև պետական բյուջեի միջոցներով իրականացված ծրագրերի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն:

(զեկ. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Ռ.Մարգարյան)

4. Այլ հարցեր:

Ելույթ ունեցան՝

1. ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը ներկայացրեց տեղեկատվություն մարզպետի աշխատակազմի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ, մասնավորապես ս/թ մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների պատճառով տեղի ունեցած աղետի հետևանքերի վերացման նպատակով պետության և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական միջոցներով իրականացված ծրագրերի վերաբերյալ, սուբվենցիոն և պետական միջոցներով իրականացվող ծրագրերի ընթացքի և խնդիրների վերաբերյալ, համայնքների կողմից ներկայացված հրատապ և առաջնային լուծում պահանջող ծրագրերի, սեփական եկամուտների հավաքագրման, դրանցում առկա խնդիրների և լուծման ուղղությունների, աղբահանության հետ կապված խնդիրների, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքների թափանցիկության և գործառույթների իրականացման օրինականության և օրինաչափությանն առնչվող և այլ հարցերի վերաբերյալ:
2. Լոռու մարզի համայնքների ղեկավարները ներկայացրեցին համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և համայնքներում բնակություն հաստատած քաղաքացիների հետ հանդիպումների և խնդիրների, սուբվենցիոն և պետական միջոցներով իրականացվող ծրագրերի, աղբահանության, գույքի վարձակալության տրամադրման և այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն:
3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյանը ներկայացրեց մայիսի 25-26-ին տեղացած հորդառատ անձրևների հետևանքով քաղաքացիներին, իրավաբանական անձանց և գյուղատնտեսությանը պատճառված վնասների, դրանց փոխհատուցման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն:
4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանը ներկայացրեց Լոռու մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ տեղեկատվություն ըստ հարկատեսակների 2024թ. ութ ամսվա կտրվածքով՝ առաջարկելով առավելագույն հետևողականություն դրսևորել հողի հարկի, տեղական տուրքերի և վճարների, անշարժ և շարժական գույքի վարձակալության վճարների մուտքերի ապահովման ուղղությամբ:
5. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանը ներկայացրեց Լոռու մարզում 2022-2023թթ. սկսված և չավարտված, ինչպես նաև 2024թ-ին իրականացվող սուբվենցիոն և պետական միջոցներով իրականացվող ծրագրերի, դրանց նկատմամբ մշտադիտարկման, արձանագրված թերությունների և ռիսկերի վերաբերյալ, որոնք կապված են աշխատանքների որակի, ժամկետների և նախագծային շեղումների հետ:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյանին՝

Աղետի գոտու բնակչությանը պետական աջակցության ծրագրերով նախատեսված միջոցների տրամադրման նկատմամբ դրսևորել ամենօրյա հետևողական վերաբերմունք, սահմանված ժամկետներում և կարգով իրազեկել համայնքների ղեկավարներին և բնակչությանը պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ. Մարգարյանին՝

2.1 Համայնքների ղեկավարների հետ կրկին անգամ քննարկել և ըստ անհրաժեշտության ներկայացնել Լոռու մարզի՝ ըստ առաջնահերթությունների հրատապ լուծումներ պահանջող ծրագրերի թարմացված ցանկը:

2.2 Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզի համայնքներում իրականացվող շինաշխատանքների որակի և ժամկետների պահպանման նկատմամբ ու նախագծային շեղումները և խախտումները բացառելու ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանին՝

Ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ մարզի բուժամբուլատորիաների հագեցվածության և կարիքների վերաբերյալ:

Առաջարկվեց Լոռու մարզի համայնքների ղեկավարներին

1. Անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը բարձրացնելու և ըստ հարկատեսակների պլանային ցուցանիշներն ապահովելու ուղղությամբ՝ մասնավորապես հողի հարկի, տեղական տուրքերի և վճարների, վարձակալության վճարների հավաքագրման ուղղությամբ:
2. Անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել մարզի համայնքներում աղբահանության պատշաճ կազմակերպման ուղղությամբ, հնարավորինս բացառել ապօրինի աղբաթափումները, անհրաժեշտության դեպքում կիրառել վարչական պատասխանատվության միջոցներ խախտումներ իրականացնողների նկատմամբ:
3. Ակտիվորեն շարունակել հանդիպումները Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված քաղաքացիների հետ, կազմակերպել հանդիպումներ, ներկայացնել պետական աջակցության ծրագրերը և աջակցել բարձրացված խնդիրների լուծման հարցերում:
4. Բոլոր տարածաշրջաններից առաջարկել ներկայացուցիչներ արցախահայության խնդիրները քննարկելու, վերլուծելու և ըստ անհրաժեշտության՝ աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացնելու նպատակով:
5. Քննարկումներ և հանդիպումներ կազմակերպել համայնքների բնակիչների հետ, պարզաբանել և ներկայացնել համայնքային խնդիրների առաջնահերթությունները,

որոնք հրատապ լուծման կարիք ունեն և զգալիորեն կնպաստեն համայնքի զարգացմանը:

6. Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել համայնքում սուբվենցիոն և պետական միջոցներով իրականացվող ծրագրերի նկատմամբ, դրանք ժամկետներում, որակով և առանց խախտումների ու թերությունների կատարման նպատակով (հաշվի առնելով, որ չի ընդունվելու ոչ մի արդարացում), և իրականացված աշխատանքների վերաբերյալ յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրը ներկայացնել տեղեկատվություն:

7. Հետևողական մոտեցում դրսևորել տրված հանձնարարականների և արված առաջարկությունների պատշաճ, ժամանակին և որակով կատարման նկատմամբ՝ բացառելով ցանկացած կոռուպցիոն կամ կամայական դրսևորում, այդ թվում նաև բոլոր տեսակի մրցույթների կազմակերպման և անցկացման գործընթացներում, կազմակերպել հանդիպումներ ազգաբնակչության հետ, վերհանել խնդիրները և տալ լուծումներ, ինչպես նաև խորհրդակցություններին ներկայանալ օրակարգային հարցերի և դրանց վերաբերյալ տեղեկատվությանը պատրաստված կարգով:

8. Աղետի գոտու բնակչությանը պետական աջակցության ծրագրերով նախատեսված միջոցների տրամադրման նկատմամբ դրսևորել ամենօրյա հետևողական վերաբերմունք, աջակցել և օժանդակել դիմումների ներկայացման, փոխհատուցումների տրամադրման հարցերի լուծման գործում:

12/09/2024

X

ԳՈՌ ԱՍՐՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ Ժ/Պ՝ **Գ.ԱՍՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99